«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկ
"Environmental project implementation unit"
state institution
"Бюро по реализации экологических программ"
государственное учреждение

0005, ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա
65 A. Tigran Mets Ave., Yerevan, 0005, Armenia
0005, Пр. Тиграна Меца 65 А, Ереван, Армения
☎(+ 37410)651-631
Էլ.փոստ /E-mail/ эл. почта info@cep.am

№ 1-06/27Ա/225
«15» ապրիլի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ՊՐՈ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թ. Հունվարի 13-ի N 9-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 35-րդ կետի 11-րդ ենթակետը՝

ՊԱՐԶԵՑԻ

Շրջակա միջավայրի նախարարության «Բնական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հայտարարված **ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԱՊՁԲ-25/9** ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված «ՊՐՈ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի կատարել պայմանագրով նախատեսված պարտականությունները:

Սույն թվականի ապրիլի 2-ի № 1-06/27Ա/198 գրությամբ «ՊՐՈ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին առաջարկվել է վճարել պայմանագրի և ապահովման որակավորումները, սակայն գրությունը մնացել է անպատասխան:

Հիմք ընդունելով իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով, մասնավորապես՝

2. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն

տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՊՐՈ ՍՏՐՈՅ» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Որոշումը տրամադրվում է Լիազոր մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը) վերոնշված ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

«ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Արմեն Եսոյան

Կատարող՝ գործերի կառավարման և գնումների բաժնի
Պետի պաշտոնակատար Դ.Նիկողոսյան
Հեռ. 010 651 631